թեալ զնոսա ածին յԵրուսաղէմ. բայց ոչ կացին 'ի պայմանի ուխտի իւրեանց, եւ բռնացեալ խնդրէին զկանոնաւորս եւ զանկանոնս, եւ նոքա կային 'ի չքաւորութեան։ Եւ Պօղոս Եպիսկոպոս, որ էր յԱղէքսանդրեա, գրեաց յԵրուսաղէմ և հարցանէր զորպիսութենէ վանաց և զդալստենէ Բդեշխին։ Իսկ սոքա հանին 'ի ճանապարհ ըզԿիրակոս եպիսկոպոս (յ8 Մայիսի) գնալ 'ի Կոստանդինուպոլիս և պատմել զանցն Բդեշխին և զտառապանս իւրեանց յերեսաց այլազգեաց և պարտատեարց, որպէս եւ գրեալ էին յառաջագոյն. առաքեցին ընդ նմա և զցուցակ միաբանաց՝ տեսանել թէ զո՞ք 'ի նոցանէ արժան իցէ պահել։ Եւ եղեւ 'ի դադարիլ տոկոսեաց պարտուց, յարեան պարտատեարք 'ի վերայ վանաց, և միաբանք փախուցեալ թագչէին սենեակ 'ի սենեկէ, և 'ի պատահիլ Փոխանորդին կալեալ զնա գանիւք եւ խոշտանգանօք վարէին 'ի դատաստան, և 'ի ճանապարհի պատահեալ ոմանց 'ի բարեկամաց միջնորդ լեալ աղաչանօք թափէին զնա 'ի ձեռաց նոցա, իսկ ոմանք 'ի միաբանաց անզգաստ և անխորհուրդ՝ պեղէին զչարիս 'ի կորուստ անձանց իւրեանց, հրապուրելով զայլազգիս, թէ մի հաւատայք բանից Խորհրդականաց, զի նոքա միայն կարող են վճարել զտոկոսիս և պահել զվանս, և այլ այսպիսի անասելի բանք, զորս չէ արժան դրոշմել 'ի գիր, որոյ վասն արտաքսեալ 'ի վանաց առաքեցան 'ի Ռեմլէ։ Զհանդուրժեալ Խորհրդականաց՝ խորհեցան խոյս տալ յԵրուսաղէմէ և փակել առ ժամանակ մի զդուռն վանաց, որպէս պատրաստեալ զպաշար ճանապարհի առաքեցին 'ի Բեթզեհէմ. գնացին Կարապետ եպիսկոպոս և Յակոբ վարդապետ, և մնային գալստեան այլոց, այլ հասեալ առ նոսա գիր Կարապետ Պատրիարքի՝ արգել զնոսա 'ի խորհրդոցն, թէպէտ և Պօղոս եպիսկոպոս յորդորեալ էր բազմիցս գրով տանել վչտաց և չթողուլ զԱթոռն, այլ սոքա արարին պատասխանի թէ՝ համբերեմք մի ամիս եւս, այնուհետեւ չէ հնար մնալ, զի լուեալ էին զսպառնալիս Բդեշխին Դամասկոսի. եթէ նորոգեսցի ասէր իշխանութիւն իմ, զփոխանորդն Լատինաց եւ զկրօնաւորս Հայոց հանդերձիւք իւրեանց հանից 'ի փայտ 'ի դրունս վանաց։

Եւ 'ի սոյն աւուրս ոմանք 'ի պարտատեարց բռնութեամբ